ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն **52**(2), 2018 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 551. 58

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ [*], Վ. Ա. ՊՈՏՈՍՅԱՆ [**]

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Տարածքի քիչ թե շատ հավասարաչափ բնակեցումը և դրանում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, լեռնային մակերևույթի առանձնահատուկ պայմաններ ունեցող ՀՀ-ում համապետական նշանակության խնդիր է: Այս իմաստով ՀՀ տարածքի գրեթե մեկ քառորդը զբաղեցնող սահմանամերձ գոտու բնակեցվածության պատկերի վերլուծությունը, տարածքային տարբերությունների և առկա հիմնախնդիրների բացահայտումը խիստ արդիական է և ունի գիտական ու կիրառական նշանակություն: Հոդվածում տրված է ՀՀ սահմանամերձ գոտում բնակչության ու բնակավայրերի բաշխվածության, տարածքի բնակեցվածության աստիճանի վերլուծություն և գնահատում:

Keywords: population and settlement distribution, population density, occupancy.

Խնդրի դրվածքը: ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից պայմաններում առաջնահերթ նշանակություն ունի հանրապետության տարածքի քիչ թե շատ հավասարաչափ բնակեցումը և տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: ՀՀ-ի նման լեռնային մակերևույթ ունեցող երկրներում որքան մեծ են բնակչության և բնակավայրերի խտությունը, այնքան ավելի բարձր են տարածքային և հողային ռեսուրսների օգտագործման հնարավորությունները և արդյունավետությունը [1]: Այս իմաստով ՀՀ սահմանամերձ տարածքներում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և բնակեցվածության աստիճանի գնահատումն ունի ոչ միայն գիտական, այլ նաև կիրառական կարևոր նշանակություն [2–4]:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Այս կամ այն տարածքում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխումը և բնակեցվածության աստիճանը պայմանավորված է բնական, պատմական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղային այլ գործոններով: Վերջիններիս ազդեցության աստիճանը տարածքի (տարածաշրջանի) բնակեցվածության ու բնակավայրերի տեղաբաշխման վրա պայմանավորված է կոնկրետ տվյալ ժամանակահատվածում տարածքի տնտեսական յուրացվածության և բնական միջավայրի միջև ստեղծված կապերով, կամ արտադրողական ուժերի զարգացման մակարդակով:

[*] E-mail: a.potosyan@ysu.am [**] E-mail: v.potosyan@ysu.am

ՀՀ-ի նման լեռնային երկրներում տարածքի բնակեցվածության աստիճանը բնակչության և բնակավայրի տեղաբաշխման բնույթը գնահատելու համար, բացի բնակչության ֆիզիկական խտության միջին ցուցանիշից նպատակահարմար է օգտագործել նաև բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի հաշվով, քանի որ լեռնային մակերևույթի առանձին տարրերի անբարենպաստության պատճառով զգալի տարածքներ ոչ միայն չեն բնակեցված, այլև դուրս են մնում տնտեսական օգտագործումից [1]:

ՀՀ սահմանամերձ տարածքներում բնակչությունը և բնակավայրերը տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ: Ըստ հաշվարկների Տավուշի և Սյունիքի մարզերին բաժին է ընկնում ՀՀ սահմանամերձ գոտու բնակավայրերի ընդհանուր թվի 63%-ը (գյուղական՝ 61, քաղաքային՝ 78%) և բնակչության՝ 70,2%-ը (գյուղական՝ 59,7, քաղաքային՝ 83,3%) (աղյ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ սահմանամերձ գոտում բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ մարզերի (2017) [5]

Մարզեր	Գյուղական		Քաղաքային		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ
Արագածոտն	2	213	0	0	2	213
Արարատ	9	12042	0	0	9	12042
Արմավիր	8	13631	0	0	8	13631
Գեղարքունիք	20	9865	2	18241	22	28106
Լոռի	5	970	0	0	5	970
Շիրակ	17	10088	0	0	17	10088
Սյունիք	72	24110	5	78799	77	102909
Վայոց ձոր	13	8594	0	0	13	8594
Տավուշ	45	58010	2	12479	47	70489
ՀՀ-ում	191	137523	9	109519	200	247042

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թիվը:

Սյունիքի մարզում է կենտրոնացած ՀՀ սահմանամերձ տարածքների բնակավայրերի և բնակչության գերակշիռ մասը. բնակավայրերի՝ 38,5%-ը (սահմանամերձ գյուղական բնակավայրերի մոտ 38 (72 գյուղ), քաղաքային բնակավայրերի՝ 56%-ը), 9 քաղաքներից 5-ը (Կապան, Գորիս, Քաջարան, Մեղրի, Ագարակ), բնակչության 41,7%-ը (գյուղական բնակչության՝ 17,5%-ը, քաղաքային բնակչության՝ 72%-ը): Մարզի սահմանամերձ տարածքներում բնակչության միջին խտությունն ընդհանուր տարածքի հաշվով կազմում է 43,5 մարդ/*կմ* ^{2}, որը 7,8 տոկոսային կետով բարձր է ՀՀ սահմանամերձ տարածքների միջին ցուցանիշից և զիջում է միայն Արմավիրի մարզի սահմանամերձ գոտուն: ՀՀ համապատասխան միջինից 1,5 անգամ բարձր է նաև մարզի սահմանամերձ տարածքներում բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական հողատարածքների: Հարկ է նկատել, որ մարզում բնակչության խտության վերը բերված ցուցանիշները ՀՀ համապատասխան միջինից բարձր են հիմնականում քաղաքային բնակչության (միայն Կապան և Գորիս քաղաքներին բաժին է ընկնում մարզի սահմանամերձ տարածքների բնակչու-

թյան 61%-ից ավելին) թվի հաշվին (աղյ. 2): Այդ է պատճառը, որ Սյունիքի սահմանամերձ տարածքների գյուղական բնակչության խտության ցուցանիշները գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի հաշվով ՀՀ համապատասխան միջիններից պակաս են 1,5 և 1,6 անգամ (աղյ. 2): Իսկ ընդհանուր տարածքի հաշվով սահմանամերձ գոտու գյուղական բնակչության խտությամբ մարզն ամենանոսր բնակեցվածներից է (11 մարդ/*կմ*^{2}):

Աղյուսակ 2

ՀՀ սահմանամերձ տարածքներում բնակավայրերի հողային ֆոնդի կառուցվածքը և բնակչության խտությունն ըստ մարզերի (2017) [5, 6]

Մարզեր	Վարչական տարածք, *կմ*^{2}		Գյուղատնտեսական հողատարածքների մակերեսը, *կմ*^{2}	Վարելահողերի և բազմամյա տնկարկների մակերեսը, *կմ*^{2}	Արոտավայրերի և խոտհարքերի մակերեսը, *կմ*^{2}	Բնակչության խտությունը, մարդ/*կմ*^{2}		Գյուղական բնակչության խտությունը, մարդ/*կմ*^{2}	
	գյուղական բնակավայրեր	քաղաքային բնակավայրեր				ընդհանուր տարածքի հաշվով	գյուղատնտեսական հողատարածքների հաշվով	վարելահողերի հաշվով	գյուղատնտեսական հողատարածքների հաշվով
Արագածոտն	42,1	0	38,0	9,7	26,4	5	6	22	6
Արարատ	326,8	0	265,7	43,0	163,4	37	45	352	45
Արմավիր	139,2	0	125,3	40,8	44,4	98	109	369	109
Գեղարքունիք	750,7	133,8	649,7	155,9	421,4	32	43	63	15
Լոռի	78,2	0	74,0	5,6	53,7	12	13	172	13
Շիրակ	405,6	0	328,9	116,2	198,4	25	31	87	31
Սյունիք	2163,4	201	1109,8	229,1	673,5	44	93	109	22
Վայոց ձոր	574,8	0	550,3	56,8	250,2	15	16	161	16
Տավուշ	1689,8	53,9	721,3	211,2	431,0	40	98	296	80
ընդամենը	6170,5	388,7	3863,0	868,3	2262,5	38	64	166	36

ՀՀ սահմանամերձ գոտում բնակչության և բնակավայրերի կենտրոնացվածության հաջորդ հատվածը Տավուշի մարզն է, որտեղ սահմանամերձ բնակավայրերի ընդհանուր թիվը 47 է (2 քաղաք, 45 գյուղ): Մարզին բաժին է ընկնում սահմանամերձ գոտու բնակչության ավելի քան 28,5%-ը (գյուղականի՝ 42, քաղաքայինի՝ 11,4%), իսկ բնակչության միջին խտությունն ընդհանուր տարածքի հաշվով (40 մարդ/*կմ* ^{2}) փոքր ինչ ավելի է ՀՀ-ում այդպիսի տարածքների միջին ցուցանիշից, տարածքի բնակեցվածության մնացած ցուցանիշներով մարզը ՀՀ այդպիսի շրջանների համապատասխան միջիններին գերազանցում է 1,5–2,2 անգամ (աղյ. 2):

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ հատվածում, բնակավայրերի ընդհանուր թիվը 22-ն է (Ճամբարակ և Վարդենիս քաղաքները և 20 գյուղ): Այստեղ տեղաբաշխված է ՀՀ սահմանամերձ գոտու բնակչության 11,4%-ը, բնակչության խտության բոլոր կարգի ցուցանիշները փոքր են ՀՀ սահմանամերձ տարածքների համապատասխան միջիններից և ՀՀ նման տարածքներում նոսր բնակեցված մարզերից մեկն է (աղյ. 2):

Արարատի և Արմավիրի մարզերը առանձնանում են ՀՀ սահմանամերձ գոտում բնակչության առավել մեծ թվաքանակով: Թեև այստեղ սահմանամերձ բոլոր բնակավայրերը գյուղական են (17 գյուղ), սակայն դրանց բաժինը ՀՀ սահմանամերձ տարածքների ընդհանուր բնակչության մեջ 10,4% է, իսկ միայն գյուղական բնակչության մեջ՝ 18,7%: Սրանք գոտու առավել խիտ բնակեցված տարածքներից են: Բնակչության խտության բոլոր կարգի ցուցանիշները Արմավիրի մարզի սահմանամերձ գոտում ամենա բարձրն են ՀՀ-ի այդպիսի տարածքներում (աղյ. 2): Արարատի մարզում այդ ցուցանիշները, բացառությամբ վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտության, մոտ են կամ փոքր տարբերություն ունեն ՀՀ համապատասխան տարածքների միջին ցուցանիշներից:

Վրաստանի և Թուրքիայի հետ սահմանամերձ գոտի ունեցող Շիրակի մարզում տեղաբաշխված է ՀՀ այդպիսի տարածքների բնակչության ավելի քան 4 և գյուղական բնակչության՝ 7,3%-ը, բոլոր բնակավայրերը գյուղեր են, բնակեցվածության բոլոր կարգի ցուցանիշներով մարզը զիջում է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշներին (աղյ. 2):

Նախիջևանի հետ սահմանամերձ գոտում գտնվում են Վայոց ձորի մարզի 13 գյուղ, որոնց բաժին է ընկնում ՀՀ սահմանամերձ գոտու բնակչության 3,5 և գյուղական բնակչության՝ ավելի քան 6,2%-ը: Թեև վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտությունը մարզի սահմանամերձ տարածքներում մոտ է ՀՀ միջին ցուցանիշին, սակայն բնակչության խտության մյուս ցուցանիշներով Վայոց ձորը էականորեն զիջում են ՀՀ համապատասխան տարածքների միջին ցուցանիշներին (աղյ. 2):

Լոռու և Արագածոտնի մարզերի սահմանամերձ գոտիներում միասին բնակվում է ՀՀ սահմանամերձ գոտու բնակչության ընդամենը 0,5 և գյուղական բնակչության 0,9%-ը: Բացառությամբ վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտության ցուցանիշի, որը Լոռու մարզում մի քանի կետով բարձր է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշից, բնակչության խտության մնացած բոլոր ցուցանիշներով Լոռու և Արագածոտնի մարզերի սահմանամերձ տարածքներն ամենանոսր բնակեցվածն են ՀՀ-ում (աղյ. 2):

Աղյուսակ 3

Գյուղական բնակավայրերի խտությունը ՀՀ սահմանամերձ տարածքներում [5, 6]

Մարզեր	Գյուղական բնակավայրերի խտությունը, բնակավայր/100 *կմ*^{2}		
	ընդհանուր տարածքի հաշվով	գյուղատնտեսական հողատարածքների հաշվով	վարելահողերի հաշվով
Արագածոտն	4,7	5,3	20,8
Արարատ	2,4	3,0	23,4
Արմավիր	6,5	7,2	24,4
Գեղարքունիք	2,7	3,1	12,8
Լոռի	6,4	6,8	88,9
Շիրակ	4,2	5,2	14,6
Սյունիք	3,3	6,5	32,5
Վայոց ձոր	2,3	2,4	24,4
Տավուշ	2,7	6,2	23,0
ՀՀ-ում	3,1	4,9	23,0

Տարածքի բնակեցվածության աստիճանը բնութագրող կարևոր ցուցանիշներից է նաև գյուղական բնակավայրերի խտությունը, որի միջին մեծությունը ՀՀ սահմանամերձ տարածքներում հավասար է ՀՀ գյուղական բնակավայրերի միջին խտությանը (3,1 գյուղ/100 *կմ*^{2}) [1], իսկ առանձին մարզերի սահմանամերձ տարածքներում այդ ցուցանիշի մասին հանգամանալից պատկերացում են տալիս աղյ. 3-ի տվյալները: ՀՀ սահմանամերձ տարածքներում գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղերի խտությունն առավել բարձր է Արմավիրի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում, որը վկայում է այդ մարզերի նմանատիպ տարածքների բնակեցվածության առավել բարձր աստիճանի մասին:

Լեռնային մակերևույթ ունեցող երկրներում, ինչպիսին է նաև ՀՀ-ն, բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և տարածքի բնակեցվածության աստիճանի վրա էական ազդեցություն են թողնում հատկապես տեղանքի ծովի մակարդակից ունեցած բարձրությունը և ռելիեֆի առանձնահատկություններով պայմանավորված մակերևույթի մի շարք տարրեր (տարածքի թեքությունների աստիճանը, դիրքադրությունները, էրոզիոն գործընթացները, ուղղաձիգ և հորիզոնական մասնատվածությունը և այլն): ՀՀ սահմանամերձ գոտում բնակչության և բնակավայրերի ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բաշխվածության վերաբերյալ աղյ. 4-ի տվյալները ցույց են տալիս, որ բնակչության կենտրոնացվածության առավել բարձր աստիճան ունի 801–1000 *մ* բարձրության գոտին: Դա պայմանավորված է առավելապես Կապան քաղաքով, քանի որ վերջինիս բաժին է ընկնում սահմանամերձ տարածքների բարձրության այդ գոտու բնակչության մոտ 44%-ը, իսկ միայն քաղաքային բնակչության 39%-ը: Հանրապետության սահմանամերձ տարածքներում առավել նոսր են բնակեցված ծովի մակարդակից 2000 *մ*-ից բարձր և 1501–1800 *մ* բարձրության շրջանները (աղյ. 4):

Աղյուսակ 4

ՀՀ սահմանամերձ գոտու բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների (2017) [5, 6]

Բնակչությունը և բնակավայրերը	Բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների, *մ*													
	մինչև 800		801–1000		1001–500		1501–1800		1801–2000		2000-ից բարձր		ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
քաղաքային բնակավայրեր և բնակչություն	2	8700	3	55050	1	20398	–	–	3	25291	–	–	9	109519
նույնը %-ով	22,3	8,0	33,3	50,3	11,1	18,6	0	0	33,3	23,1	0	0	100	100
գյուղական բնակավայրեր և բնակչություն	33	34075	31	42109	57	32117	28	16611	24	7437	18	5174	191	137523
նույնը %-ով	17,3	24,8	16,2	30,6	29,8	23,4	14,7	12,0	12,6	5,4	9,4	3,8	100	100
ընդամենը	35	42855	34	97159	58	52515	28	16611	27	32728	18	5174	200	247042
նույնը %-ով	17,5	17,3	17,0	39,3	29,0	21,3	14,0	6,7	13,5	13,3	9,0	2,1	100	100

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թիվը:

Քանի որ ՀՀ սահմանամերձ տարածքներում քաղաքային բնակչության 69%-ը կենտրոնացված է միայն Կապան, Գորիս և Վարդենիս քաղաքներում, ապա բնակչության և բնակավայրերի՝ ըստ ծովի մակարդակից ունեցած բաշխվածության աշխարհագրական առանձնահատկությունների իրական պատկերը կունենանք, եթե այն քննարկենք գյուղական բնակչության և բնակավայրերի համար, քանի որ վերջիններս բաշխված են ՀՀ սահմանամերձ գոտու տարբեր հատվածներում:

Գյուղական բնակավայրեր կան ՀՀ սահմանամերձ տարածքի բարձրության բոլոր գոտիներում: Սահմանամերձ ամենացածրադիր (Դեբեդավան՝ 400 *մ*) և ամենաբարձրադիր (Վերին Շորժա՝ 2420 *մ*) գյուղերի միջև ծովի մակարդակից ունեցած բարձրությունների տարբերությունն անցնում է 2000 *մ*-ից:

ՀՀ սահմանամերձ գյուղերի թվաքանակն առավել շատ է (57 գյուղ) 1001–1500 *մ* բարձրության գոտում, իսկ գյուղական բնակչությունը՝ 801–1000 *մ* բարձրության գոտում (սահմանամերձ տարածքների գյուղական բնակչության 30,6%-ը): Ընդհանուր առմամբ հանրապետության սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերի 63,3 և բնակչության 78,8%-ը տեղաբաշխված են ծովի մակարդակից 400–1500 *մ* բարձրություն ունեցող տարածքներում: Ընդ որում, սահմանամերձ տարածքներում ծովի մակարդակից մինչև 1500 *մ* բարձրության գոտում գյուղերի 37 (121-ից՝ 45-ը) և բնակչության 53,6%-ը բաժին է ընկնում Տավուշի մարզին: Գեղարքունիքում սահմանամերձ 20 գյուղերից 19 տեղաբաշխված են 1800 *մ*-ից բարձր տարածքներում և միայն մեկն է գտնվում 1501–1800 *մ* բարձրության գոտում:

Աղյուսակ 5

ՀՀ մարզերի սահմանամերձ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխվածությունն ըստ բարձրության գոտիների (2017) [5, 6]

Մարզեր	Գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների, *մ*												Բնակչության ընդհանուր թիվը
	մինչև 800		801–1000		1001–1500		1501–1800		1801–2000		2000-ից բարձր		
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	
Արագածոտն	–	–	–	–	2	213	–	–	–	–	–	–	213
Արարատ	1	912	4	8872	1	581	2	1470	1	207	–	–	12042
Արմավիր	–	–	7	12922	1	709	–	–	–	–	–	–	13631
Գեղարքունիք	–	–	–	–	–	–	1	1117	6	4143	13	4605	9865
Լոռի	–	–	–	–	1	104	4	866	–	–	–	–	970
Շիրակ	–	–	–	–	8	6583	3	2508	2	493	4	504	10088
Սյունիք	6	1805	7	678	34	11419	15	9043	10	1165	–	–	24110
Վայոց ձոր	–	–	1	1964	3	3529	3	1607	5	1429	1	65	8594
Տավուշ	26	31358	12	17673	7	8979	–	–	–	–	–	–	58010
ՀՀ-ում	33	34075	31	42109	57	32117	28	16611	24	7437	18	5174	137523

ա՝ բնակավայրերի թիվը; բ՝ բնակչության թիվը:

Սահմանամերձ տարածքներում գյուղական բնակավայրերի և բնակչության ըստ բարձրության գոտիների բաշխվածությամբ առանձնանում է նաև

Սյունիքի մարզը: Այստեղ, բացի 2000 *մ*-ից բարձր գոտու, սահմանամերձ գյուղեր կան բարձրության մնացած բոլոր գոտիներում: Սահմանամերձ գյուղերի և բնակչության թվով առանձնանում է 1001–1500 *մ* բարձրության գոտին, որտեղ գտնվում են նմանատիպ գյուղերի 47 և գյուղական բնակչության 47,4%-ը:

Շիրակի մարզում սահմանմերձ գյուղերը գտնվում են ծովի մակարդակից 1300–2250 *մ* բարձրությունների վրա, սակայն մարզի սահմանամերձ գյուղական բնակչության 65%-ից ավելին բաժին է ընկնում 1001–1500 *մ* բարձրության գոտուն:

Վայոց ձորում, բացի մինչև 800 *մ* բարձրության գոտու, սահմանամերձ գյուղեր կան մնացած բոլոր գոտիներում: Արարատի մարզը, թեև ունի քիչ թվով (8) սահմանմերձ գյուղ, սակայն դրանք բաշխված են, բացի 2000 *մ*-ից բարձր շրջաններից մնացած բոլոր գոտիներում: Մարզի սահմանամերձ գյուղական բնակչության մոտ 74%-ը բաժին է ընկնում 801–1000 *մ* բարձրության գոտում ընկած 4 գյուղի:

ՀՀ-ում սահմանամերձ գյուղական բնակավայրերի և բնակչության ըստ բարձրության գոտիների բաշխվածության տվյալները բերված են աղյ. 5-ում:

ՀՀ սահմանամերձ գոտում բնակավայրերի և բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունների և տարածքային տարբերությունների վերլուծության արդյունքների ամփոփումը և ընդհանրացումը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1. ՀՀ սահմանամերձ գոտում առկա է տարածքի բնակեցվածության տարածաշրջանային զգալիորեն մեծ տարբերություններ: Բնակավայրերի և բնակչության կենտրոնացվածության առավել բարձր մակարդակով առանձնանում են Սյունիքի և Տավուշի, ցածր՝ Արագածոտնի և Լոռու մարզերը:

2. ՀՀ սահմանամերձ տարածքներում բնակչության և բնակավայրերի կենտրոնացվածության աստիճանն առավել մեծ է Ադրբեջանի, ցածր՝ Վրաստանի հետ սահմանամերձ գոտում:

3. Բոլոր մարզերի սահմանամերձ տարածքներում բնակչության խտությունն ընդհանուր տարածքի հաշվով զգալիորեն փոքր է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշից, բացառությամբ Արմավիրի մարզի՝ որտեղ այն համեմատաբար բարձր է, և մոտ է ՀՀ բնակչության խտության միջին ցուցանիշին:

4. ՀՀ սահմանամերձ տարածքներում բնակեցվածության նշանակալից տարբերություններ կան ոչ միայն ընդհանուր տարածքի, այլ նաև գյուղատնտեսական հողատարածքների հաշվով: Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի մարզերում այդ ցուցանիշները փոքր են ՀՀ միջինից, իսկ Արմավիրի, Սյունիքի և Տավուշի մարզերում՝ բարձր (Սյունիքի մարզի սահմանամերձ տարածքներում գյուղատնտեսական հողատարածքների հաշվով ընդհանուր բնակչության խտության համեմատաբար բարձր ցուցանիշն առավելապես պայմանավորված է մարզի սահմանամերձ գոտում քաղաքային բնակչության տեսակարար բարձր կշռով):

5. ՀՀ սահմանամերձ տարածքների բնակեցվածության առավել իրական պատկերն արտահայտող վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտության համեմատաբար բարձր ցուցանիշներ ունեն Արմավիրի, Արարատի, Տավուշի և Լոռու մարզերը, մնացած մարզերում այն փոքր է համապատասխան միջինից:

6. Տարածքի բնակեցվածության պատկերն արտահայտող գյուղական բնակավայրերի խտության ցուցանիշը ՀՀ սահմանամերձ տարածքներում թեև հավասար է ՀՀ համապատասխան միջինին, սակայն գյուղատնտեսական հողատարածքների հաշվով այն ՀՀ այդ կարգի ցուցանիշից պակաս է 1,3 անգամ:

7. Հանրապետության սահմանամերձ գոտու գյուղական բնակավայրերի և բնակչության հիմնական մասը տեղաբաշխված են մինչև 1500 *մ* բարձրության գոտում, միաժամանակ բնակավայրեր կան ՀՀ բնակեցված տարածքի բարձրության բոլոր գոտիներում:

ՀՀ սահմանամերձ գոտու բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և բնակեցվածության աշխարհագրական առանձնահատկությունների և տարածքային տարբերությունների վերը բերված վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս բացահայտել այդպիսի տարածքների տարաբնակեցման առկա հիմնախնդիրները և միջոցառումներ իրականացնելու նշված շրջաններում սոցիալ-տնտեսական զարգացման և արդյունավետ տարածաշրջանային քաղաքականություն վարելու համար:

Ստացվել է՝ 29.01.2018

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պոտոսյան Ա.Հ.** ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Եր., 2017:
2. **Պոտոսյան Վ.Ա.** ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացը և առկա հիմնախդիրները: // ԵՊՀ Գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն, 2017, հ. 51, № 2, էջ 135–142:
3. ՀՀ-ի օրենքը ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին: Եր. 20.05.2002:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին: Եր., 17.11.1998, № 173:
5. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017: Եր., 2017:
6. ՀՀ համայնքների (բնակավայրերի) վարչական տարածքների և հողային ֆոնդի վերաբերյալ Կադաստրի պետական կոմիտեի տվյալներ:

А. А. ПОДОСЯН, В. А. ПОТОСЯН

К ВОПРОСУ О ЗАСЕЛЕННОСТИ ПРИГРАНИЧНОЙ ЗОНЫ РА

Резюме

В Армении, имеющей особенности горного рельефа, вопросы равномерной заселенности территории и эффективного использования имеющихся там ресурсов являются задачей государственного масштаба. В этом смысле анализ состояния заселенности приграничной зоны, занимающей почти четверть территории РА, выявление территориальных различий и имеющихся проблем предельно актуально и имеет научное и практическое значение. В статье представлен анализ степени заселенности и распределения населения и поселений приграничной зоны РА.

A. H. POTOSYAN, V. A. POTOSYAN

ON THE ISSUE OF THE RA BORDERING BELT SETTLEDNESS

Summary

More or less evenly settling of an area and effective use of resources it contains is a nationwide problem in the RA with special conditions of mountainous surface. In this sense, the analysis of settledness image, revelation of regional differences and current problems of bordering belt occupying almost a quarter of the RA territory are extremely actual and have a scientific and practical importance. The analysis and assessment of settledness level of an area, population and settlements distribution in the RA bordering belt are given in the article.